ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«11» սեպտեմբերի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 25 (քսանհինգ) անդամներ՝

Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյանը, Վ.Եդիգարյան, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Տ.Փանոսյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ա.Տոնոյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Ա.Մխիթարյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Վարդանյանը, Գ.Մաթևոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Հ.Պողոսյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ՀԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 11-ի հերթական հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել Ավագանու չորս անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):
2. Հաստատել Հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝
   1) Հասմիկ Լևոնի Եղիազարյան,
   2) Անդրանիկ Հրաչիկի Խաչատրյան,
   3) Լուսինե Ռուբենի Սանոյան,
   4) Կարինե Ռազմիկի Թաթարյան:
3. Սահմանել, որ՝
   Հանձնաժողովն իր լիազորությունները պահպանում է մինչև Ավագանու հաջորդ հերթական նստաշրջանի Հանձնաժողովի ձևավորումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Խորհրդում, որպես Գյումրի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ, առաջադրել մրցույթում հաղթող ճանաչված Բորիս Արամի Դարբինյանին (ծնված՝ 08.08.1995թվական, անձնագիր՝ AN 0225782, տրված՝ 03.08.2012 թվական, ոստիկանության 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի, Անտառավան 3 թաղամաս, շենք 21, բնակարան 52):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N 119-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը սահմանելու մասին» N 119-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի (այսուհետ՝ Կարգ) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «200.000 (երկու հարյուր հազար)» թիվը և բառերը փոխարինել «500.000 (հինգ հարյուր հազար)» թվով և բառերով,
   2) Կարգի 10-րդ կետի «5.000.000 (հինգ միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «30.000.000 (երեսուն միլիոն)» թվով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Արմեն Հակոբյանի ընտանիքին, որպես դրամական օգնություն, հատկացնել՝ 50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ԱՂՈՒՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աղունիկ Սահակյանի ընտանիքին, որպես դրամական օգնություն, հատկացնել 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի «Արևիկ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 389.400 (երեք հարյուր ութսունինը հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ շենքի և գույքի պահպանության համար անվտանգության ազդանշանային համակարգ տեղադրելու նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԱԾԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության խոհանոցի գույքի և օդաքարշ պահարանի ձեռք բերման համար:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 11 (ՏԱՍՆՄԵԿ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 11 (տասնմեկ) կազմակերպություններին, որպես նվիրատվություն, հատկացնել 6.001.150 (վեց միլիոն մեկ հազար մեկ հարյուր հիսուն) Հայաստանի

Հանրապետության դրամ, շենքերի ընթացիկ նորոգման, գույքի և անհրաժեշտ այլ ծախսերի համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 9/6/1, 8/2/3 և 8/2/2 գործառական դասակարգումների (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ» ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի «Գյումրու օր» ամենամյա տոնակատարության և Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 8.000.000 (ութ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 1 (Հ.Եղիազարյան)
ձեռնպահ – 0

Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու «Գալա» խմբացության անդամներ Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի քաղաքի կազմակերպություններին, որպես նվիրատվություն, հատկացնել 1 900 000 (մեկ միլիոն ինը հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առաջնահերթ լուծում պահանջող օբյեկտների շինարարության նախագծա-նախահաշվային աշխատանքների իրականացման համար՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 170-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 55-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի մայիսի 24-ի «Շիրակացի թիվ 162/1 հասցեում գտնվող շենքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 55-Ա որոշումը:
2. Օրենքով սահմանված կարգով լուծել 2012 թվականի հունիսի 27-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը (պատասխանատու բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին):
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Գյումրու տարածքային ստորաբաժանում՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09072012-08-0073 վկայականը չեղարկելու համար:

Որոշումն ընդունվեց

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 4 (Ս.Աստոյան, Ա.Խաչատրյան, Ա.Աղանյան, Ա.Մխիթարյան)
ձեռնպահ – 3 (Ա.Գրիգորյան, Ա.Ղարաղազարյան, Ա.Առաքելյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող և «անհայտ» քաղաքացիներին որպես սեփականություն փոխանցված և դրանց նկատմամբ իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունեցող հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու ստորաբաժանմանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նկատմամբ համայնքի իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Որոշումն ընդունվեց

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 138-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի նախկին երկաթուղայինների մշակույթի պալատի վթարային շենքի տարածքը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին» N 138-Ա որոշումը:

Որոշումն ընդունվեց

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿԻ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Դադարեցնել՝ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, «Լիլիթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 12122017-08-0022) Վազգեն Սարգսյան փողոցի N 20 հասցեի 0.504709 (զրո ամբողջ հինգ հարյուր չորս հազար յոթ հարյուր ինը միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասից, 0.025626 (զրո ամբողջ քսանհինգ հազար վեց հարյուր քսանվեց միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասի մասով որոշման գործողությունը, հետ վերցնել հողամասը և 08-001-0341-0063-004 ծածկագրով 13,57 (տասներեք ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շվաքարանը՝ համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով:

2. «Լիլիթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված՝ գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին պայմանագրում, կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել պետական գրանցման:

Որոշումն ընդունվեց

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
Քվեարկությանը չմասնակցեց ավագանու «Գալա» խմբակցության անդամ Ա.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 8/9 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
Քվեարկությանը չմասնակցեց ավագանու «Գալա» խմբակցության անդամ Ա.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24052018-08-0009 վկայական) Գործարանային փողոց N 8/9 հասցեի 43.34 (քառասուներեք ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով մառանը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0170-0051 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.005652 (զրո ամբողջ հինգ հազար վեց հարյուր հիսուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Նկատի ունենալով մառանի վթարայնության աստիճանը և հաշվի առնելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2018 թվականի հուլիսի 10-ի N 07101811 անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, հաստատել աճուրդի մեկնարկային գինը՝ 577.000 (հինգ հարյուր յոթանասունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ N 25/5 ՀԱՍՑԵԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Քվեարկությանը չմասնակցեց ավագանու «Գալա» խմբակցության անդամ Ա.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06072018-08-0001 վկայական) Թբիլիսյան խճուղի 1-ին թաղամաս N 25/5 հասցեի 11,15 (տասնմեկ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինությունը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-1204-0020 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.00423 (զրո ամբողջ չորս հարյուր քսաներեք հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Նկատի ունենալով օժանդակ շինության վթարայնության աստիճանը և հաշվի առնելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2018 թվականի օգոստոսի 24-ի N 08241812 անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, հաստատել աճուրդի մեկնարկային գինը՝ 117.000 (մեկ հարյուր տասնյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 1 (Ա.Առաքելյան)
ձեռնպահ – 0

Քվեարկությանը չմասնակցեց ավագանու «Գալա» խմբակցության անդամ Ա.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերը տրամադրել մրցույթով, կառուցապատման իրավունքով և սահմանել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑ N 36/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 3 (Լ.Բարսեղյան, Ա.Գրիգորյան, Ա.Վարդանյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոց N36/1 հասցեում ինքնակամ կառուցված 6.96 (վեց ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 6.96 (վեց ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացի Զինա Հովհաննեսի Իսպիրյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 42.000 (քառասուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի վարձակալության պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

22. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ, «ՅՈՒՔՈՄ», «ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻ ՎԻ» ԵՎ «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու «Գալա» խմբացության անդամներ Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Վարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպություններին տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունք (սերվիտուտ)՝ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության՝ կապի գծերի անցկացման համար նախատեսված հողամասերի նկատմամբ:
2. Կազմակերպությունների հետ 25 տարի ժամկետով կնքել սերվիտուտի պայմանագրեր՝ տարեկան վարձավճար սահմանելով 30 (երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ 1 քառակուսի մետրի դիմաց:
3. Գյումրի համայնքի ղեկավարին՝ հիմք ընդունելով համաձայնեցված նախագծերն ու հողօգտագործման սխեմաները, սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

23. ՍԵՐԳԵՅ ՆՈՐԱՅՐԻ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԻՆ«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սերգեյ Նորայրի Նազարեթյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

24. ԻՍՐԱՅԵԼ ՆԻԿՈԼԱՅԻ ՄԻԼԻՏՈՍՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ. ՂԱՋԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Իսրայել Նիկոլայի Միլիտոսյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

25. ԼԵՈՆԱՐԴՈ ԳՄՅՈՒՐԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ «Գալա» խմբակցության անդամ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Լեոնարդո Գմյուրին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

26. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 1 (Ա.Առաքելյան)
ձեռնպահ – 3 (Լ.Բարսեղյան, Ա.Գրիգորյան, Ա.Վարդանյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն «Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնաարտադրական ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2018 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ՝ ազատելով համապատասխանաբար՝ 175.986 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր ութսունվեց) Հայաստանի հանրապետության դրամ և 18.746 (տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 194.732 (մեկ հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ, ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԵՎ «ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ. ԲԱԴԱԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Լիազորել Գյումրի համայնքի ղեկավար Սամվել Բալասանյանին՝ Գյումրի համայնքի անունից մասնակցելու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին և ներկայացնելու «Կոմունալ ծառայության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում» ծրագրի հայտը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել ծրագրի արժեքը՝ 93.900.000 (իննսուներեք միլիոն ինը հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 56.340.000 (հիսունվեց միլիոն երեք հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը համաֆինանսավորման

տեսքով ներդնում է համայնքը՝ 2018 թվականի Գյումրի համայնքի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

3. Գյումրի համայնքի ղեկավարին վերապահել ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը և դրանցից բխող գործառույթների կազմակերպումն ու իրականացումը:

28. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹՈՌՆԻԿ ՄԱՆՈՒՇԱԿ»» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն՝ կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արևհատ Լևոնի Տոնոյանի թեկնածությանը (ծնված՝ 05 փետրվարի 1987 թվական, անձնագիր՝ AG 0268545, տրված՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանության 016-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի տնակ 209/105, սոցքարտ N5503870107):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի ղեկավարի ներկայացրած հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վարդգես Մելսիկի Սամսոնյանի թեկնածությանը (ծնված՝ 1981 թվականի մարտի 11-ին, անձնագիր՝ AM 0443409, տրված՝ 2011 թվականի սեպտեմբերի 02-ին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության 030-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Գործարանային տուն 9, ՀԾՀ՝ 2103810212):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2018 թվականի հոկտեմբերի 11-ը, ժամը 12^{00}-ն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ

Ս. Բալասանյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ա. Մխիթարյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Վարդանյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան

Հ. Պողոսյան

Ա. Առաքելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«11» սեպտեմբերի 2018թ.